

Նույն հեղինակից լույս են տեսել

Գառկերներ  
Հոր վրեժը  
Աշխարհ դեմ  
Հիսնամյակ  
Մայր  
Ցավի Օղակներ

بطروس كاجيرونى

کتاب آندیشه

زبان ارمنی

93  
62/10/22 کتابخانه ملی

ԳԻՆԸ՝ 150 ՌԻԱԼ

ՊԵՏՐՈՍ ԲԱԶԳԵՐՈՒՆԻ

ՄԱՏՅԱՆ  
ԽՈՀԵՐԻՍ

000

ԹԵՂՈՒՆ 1983

ՊԵՏՐՈՍ ԲԱԶԲԵՐՈՒՆԻ

ՄԱՏՅԱՆ  
ԽՈՂԵՐԻՍ

000

ԹԵՂՆԱՆ 1983

Արքայաբարձու Գրիգորի Կոստան  
անդ ինչ զի սուս հարցանելի և շնորհաբար  
լարայան արարելով՝ երկրապարհ  
Տղամարդու խել և զսուս լարայան  
Արքայի Գրիգորի Կոստան  
Գրիգոր Կոստանի որի արարան խել  
ան լարայան արարելի և հարկա խելայան  
Սյան Գրիգորի Կոստանի արարել լարայան  
Չեղանկ արար Գրիգորի Կոստանի արարել լարայան  
Գրիգոր Կոստանի արարել լարայան

Մարտի 10-ին 1984

10-ին Գրիգորի Կոստանի 1984

Գրիգորի Կոստանի

Այս գիրքը հրատարակվում է  
հարգելի գրասեր Տիկ. Հայկանուշ  
Մարտիրոսյանի նյութական նվիրատու-  
վությամբ, ի հիշատակ իր անմոռաց  
ամուսնու, հայաստանսեր

Հակոբ Մարտիրոսյանի,  
որի համար հայտնում են իմ ջերմ  
շնորհակալությունները:

Հեղինակ

## ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի ազատութիւնը:

Ես սիրեցի ազատութիւնը թե ինձ համար, թե  
բոլորի համար:

Երբ ես ուզեցի ազատ լինեմ, ես ուզեցի բոլորն  
էլ ազատ լինեն, բոլորն էլ ազատութիւն վայելեն:

Ես սիրեցի խաղաղութիւնը:

Ես սիրեցի խաղաղութիւնը թե ինձ համար, թե  
բոլորի համար:

Երբ ես ուզեցի խաղաղության մեջ լինեմ, խաղա-  
ղությամբ ապրեմ, ես ուզեցի բոլորն էլ խաղաղության  
մեջ լինեն, բոլորն էլ խաղաղության մեջ ապրեն:

Ես սիրեցի նաև ինձ:

Սակայն ես ինձ սիրելիս, բոլոր մարդկանց ևս  
սիրեցի, առանց որոնց իմ սիրով սիրելը՝ ժահրալից  
թույն, իմ տենչացած խաղաղութիւնը՝ տանջալից տառա-  
պանք. իսկ իմ ըղձացած ազատութիւնը՝ օղագուրկ, մը-  
թամած զնդան կդառնա:

Օ, իրեն սիրելը, բոլորին սիրելով թող լինի:

Խաղաղութիւնը բոլորի համար թող լինի:

Ազատութիւնը բոլորի համար թող լինի:



Տուն զնալու համար հանրակառք էր նստել: Կես օր էր, շատ շոգ էր: Դիմացիս ծամբորդը հանրակառքի մուտքի փոքրիկ տոմսիկը թափահարելով՝ փորձում էր իրեն հով տալ, հովանալ:

Կոնտրոլերն եկավ եւ տեսնելով նրա ջանադրուլթյունը՝ թեթեւ քմծիծաղ տվեց, ասելով.

—Այս մեծ շոգին՝ այդ պստիկ թղթիկով ուզում ես հովանալ:

—Միթե՞ չի լինի.— զարմացավ մարդը.— քայց չէ՞ որ հենց սրանով այս մեծ մեքենան, երկհարկանին նստած մինչեւ տունս եմ զնալու:

—Այո՛, քայց... Ահա այս մեքենան թեեւ ձիուց ավելի արագ է վազում, սակայն նա չի կարող թռչունի նման թռչել. ինչպես թռչող թռչունը չի կարող սրա նման մարդ տանել, վազել: Դու այս տոմսակով ամենապստիկ թաքսին անգամ չես կարող նստել...:

Ունկնդրելիս մտորեցի... Բայց ավելի լավ չի՞ թողնեմ դուք եզրահանդումը կատարեք:



Մայրով զնում էի: Սրը կեսօրվա ջերմ արևով էր զինվել: Աշխատում էի այս մայրից այն մայրն անցնել, ցիրուցան ծառերի սովերների հետամուլթյամբ, չէ՞ որ հաճելի է շատ, ծառերի շվաքի տակով քայլել, երբ մանավանդ մի զովասուն հովիկ քեզ է շուլալվում... սիրալիր կարոտն առնողի պես:

Հեովից, մայրերի աովի մեջ շնաչափ մի կատու տեսա,

որ ով զիտե որտեղից և ինչպես, մի մեծ կտոր մի մանկել և ըննազրավողի թարմ ախորժակով, խիստ սուր ազահուլթյամբ, ամենայն շտապողականուլթյամբ խժողում:

Նա եւս ինձ «տեսավ»: Արդյո՞ք քայլերիս ծայնից զգաց... Որ մեկ էլ հանկարծ տազնապած, ամենամարպիկ տուլնով. ամենամուտ զողի պես, որ ոստիկանի հեռավոր սովերից վտանգը կանխազգում է... Նա կոնակը կծեց, զամ իր ավարը տեղափոխել շուլգելով, կայծակի շանթիլը րազուլթյամբ փախավ...:

Ինչ, մտորեցի... քայց թողեք եզրահանգումը ձեզ թողնեմ:

### ԱՆԱՐՁԱԳԱՆՔ ՍԵՐ

Ամեն անգամ երբ արևը զնում է, ես էլ եմ ուզում զնալ, զնալ հանգստանալ:

Ամեն անգամ երբ թռչունները լողում են, ես էլ եմ ուզում զնալու պես լոնել, բերանս փակել:

Ամեն անգամ երբ սաղարթների սոսափյունը դադարում է, ես էլ եմ ուզում զնալու պես, լոնելու պես դադարել ու հանգստանալ:

Հետո, ամեն անգամ երբ արևը շիկնած զալիս է, երբ թռչունները սիրալից դայլայլում են, երբ սաղարթները զվարթորեն սոսափում են, ես էլ եմ ուզում նրանց հետ լինել, — շիկնած, սիրալիր ու զվարթորեն վերադարձ ունենալ:

Ես նրանց սիրելով, նրանց նման լինել ուզելով, նրանց հետ էլ լինել եմ ուզում:

Ես ուզելով տենչում եմ... քայց նրանք իմ սերը չզիտեն...:

## ՕՐԸ ԿԱՆՑՆԻ

Օրը կանցնի:

Երբ դու հափրանքով, անհագորեն ուտում էիր, ու հագեցած ժպտում էիր, քանիներ քիչ այն կողմ անոթի էին, քաղցից տանջվում էին: Դու չտեսար ինչպես նրանք ձեռքերը բարձրացրած, մայթերի վրա, չոր հացի կարոտանքով, դատարկ ստամոքսով օրն անցկացրին, գիշեր դարձրին:

Երբ դու անկուշտ ըմբռնումով ըմպում էիր, ոգելիցով ոգեշինացած քեզ երջանիկ հայտարարելով. քիչ այն կողմ քանիներ պարզ շուրթի կարոտից, ծարավից տոչորվում էին: Դու չտեսար ինչպես նրանք կաթիլ շուրթի կարոտանքով և պապակած շրթներով օրն անցկացրին, գիշեր դարձրին:

Երբ դու կանչեցիր.

- Կուշտ եմ, հագեցել եմ.- դու չլսեցիր նրանց արձակած աղեկտուր կանչերը, ճիշերը՝ «Անոթի ենք, սոված ենք»:

Երբ դու գոռացիր.

- Ես հարբել, ես արբել եմ.- դու արդեն չէիր կարող լսել համերգ դարձած նրանց կանչերը, «Ծարավ ենք, ծարավ ենք»:

Իսկ օրն անցավ, գիշեր դարձավ:

Օրը կանցնի, միայն թե քեզանից ի՞նչ տանի...:

## ՄԵԿՆԱԾ...

Մեկնած մարդերից մի մասը, անմոռանալի՛ ընտրանին, բարի գործեր կատարած, կտակած է մեկնել: Մարդերից մի մասն էլ, մի լուսալիր համաստեղություն, իր հերթին, պարտականության պարտավորություն, նորություններ հայտնաբերելով, հայտնաբերվածները զարգացնելով, մեզ կտակելով մեկնելու է:

Օգտակար դարձած, օգտակարության ծիրով մեծարվելիք մարդասեր այդ մեկնողները չլինեին, քիչ լինեին, մենք չէինք կարող չկանալով՝ մեր տան հատակը մաքրել, տաք շուրթ-օժառ չգործածելով՝ մեր երեսը սափրել, քայլ իսկ չփոխելով՝ մինչև՝ քսաներորդ հարկը բարձրանալ...

(Շատ տարածված, ամեն տեղ գործածվող պարզագույնները հիշելով):

Բայց և ավելացնելով՝ մարդու հինավուրց երազ-տենչանքը, հեքիաթներում հիշվածը, որ ոտքը ոտքի վրա գցած, աթոռում բազմած, եթերի՛ մեջ ճախրելով սրընթաց ճամփորդելը, անչափելի հեռուներից՝ բայց ասես մեր կողքին կանգնած խոսողներին՝ մեր ականջով լսելը, մեր աչքերով խոսողին տեսնելը...:

Օ՛ մարդանվեր մեկնողները, անմահացածները չլինեին, քիչ լինեին, այսօր դու, ես, մենք, չէինք կարող այս քան արագ և ստույգ բուժումների ենթարկվել, այդքան շատ ու շուտ բուժվել, քաջաողջությամբ երկար ապրել: Կարող ես աշխարհը պատկերել առանց նրանց կատարած-կտակած մարդանվեր գործերի:

Մեծ է թիվը և շատ են տեսակները կյանքը քաղ...

ցընող, լուսցնող, որակավորող բարիքները գյուտերի, որ մեծարելի մեկնածները գյուտարար, որպես կյանքից կյանքին պարգեւ, մեզ են ընծայել, մեզ են կտակել:

Մեկնած անմոռաց այդ փաղանգի թողածին ժառանգորդ, տեր դարձած վայելողդ, նրանց հրաշագործին ու սիրանքին արդյո՞ք մասնակցել ես. մանավանդ նրանցից մեկի քրտինքը սրբե՞լ ես:

Դեռ չմեկնած նոր հայտնություններով մեծարվելիքներին, նոր գյուտարար-հնարիչներին ինչպե՞ս:

Հարկ է ու պարտադրանք, մարդ կոչումի, վայելողի պարտադրանք, գեթ բարի հիշել, հարգալից հիշել:



Ամեն մի նոր եկողի հետ, թեև փոքրիկ, բայց սիրելի, աշխարհը մի պահ ծանրանում է:

Ամեն մի ծեր մեկնողի հետ, թեև ծանր, բայց հարգելի, աշխարհը մի պահ թեթևանում է:

Ահա այս ծանրանալուց, այս թեթևանալուց է առաջ գալիս աշխարհի օրոր-օրորվելը, արեգակի շուրջ շրորովելով պտտվելը:

Միսչև իսկ այս գալով- գնալուց է, որ լուսինը մեկ աշխարհի այս մասին է այցի գալիս, մեկ այն մասին է տեսության գնում:

Որքան ժամանակ այս գալն ու գնալը լինի, աշխարհս արեւի շուրջը պիտի պտտի, որքան ժամանակ աշխարհի արեւի շուրջը պտտելը կլինի, այս գալն ու գնալը պիտի լինի, կլինեն:

## ԺԱՄԱՆԱԿԸ ԲՈՒԺԻՉ Է

- Ժամանակը բուժիչ-բուժող է.- լսեցի ասեն: Հո- վատացի:

- Ժամանակը ամենաբույժ բուժող է.- խորին հավատ- քով սկսեցի արձագանքել, լսածս տարածել:

- Ժամանակը բույոր տեսակի վերքերն ու վշտերը, բու- լոր տեսակի ցավերը բուժող է: Բույոր անբուժելիները նա իր բուժիչ զլանի տակ առնելով՝ իր հարաշարժ, միշտ ընդառաջ ընթացող շարժման մեջ բուժում է: Ամենից շատ անբուժելի կարծված վշտերն ու վերքերը, կսկծալի ցա- վերը՝ ամիսներից, տարիներից բաղկացած, բաղադրյալ - զլանի տակ առնելով՝ փափկացնում, մեղմացնում և... մոռացնել է տալիս: Իսկ մոռացումը՝ բուժում է: Ժամա- նակն ինչ ահեղի վշտեր, ինչ կսկծուն ցավեր, ինչ ան- մոքելիներ ամոքել, ամոքելով բուժել է:

Ահա լսածս՝ ընդարձակած, ահա ստացածս՝ բազմապատ- կած, հավատալով տարածածս, բույորի ականջին հասցրածս:

Ես դեռ հիմա ևս լսածիս հավատում եմ: Դեռ հիմա եւս կանգ չեմ առել այն տարածելուց, ամենքի ականջին հասցնելուց... Միայն թե երբ ինքս ինձ, իմ վշտի հետ միայնակ եմ մնում, իմ մեջ տարակուսանք, կասկած է առաջանում, եւ մեղավորի պես մեղանչելով հարց եմ տա- լիս.

- Բայց այս ինչ բուժիչ-բուժող ժամանակ է, որ հային հանդիպելիս, հայի սրտի ու մտքի, նրա տենչերի ու երագանքների Մասիսի ցավը չի բուժում, մեղմացնե- լով, մոռացնելով...:

Այլ՝ սխալ տրված դեղահատի նման դեռ ավելի է խորացնում, դեռ ավելի է թարմի նման կսկծացնում. անգամ հայի մանուկին էլ մորմոքելով:

Ուրթշ ժամանակ է պետք:



Մի տարեկան մանկիկն իր մատն էր կտրել: Առաջին անգամ էր, որ նա իր մատը կտրում էր, մատի կտրվածք էր ունենում:

Նա սրտակեղեք լացով լացեց. ողբաձայն լացով մորն իր մոտ կանչեց:

Մայրը փութաց կտրված մատին կարմիր գուլյն ծարքսել:

Մանուկը մատիկին նայելով, կարմիր գուլյն ծարքսեսնելով, որպես թե ցավը բորբոքած, սաստկացրած լինեն, սկսեց ավելի հուզումնալից լացել. ավելի ողբաձայն լացել:

Խորագետ մայրն այս անգամ չկտրված, չցավող մյուս ձեռքի մատին կարմիր գուլյն ծարից քսեց:

Մանուկը մեկ այս մատին, մեկ այն մատին սկսեց նայել: Նայեց եւ ասես ցավի բաժանում կատարված լինի, օ՞րբեթև ացածի պես, մոռացավ լացելը, արցունք թափելը:

Վշտահարին այցելելով, մխիթարիչ խոսքեր ասելով, ցավակցութուն հայտնելը, նրա ուշադրութունը այլ հարցերով զբաղեցնելը, միթե՞ վշտահարի վիշտը թեթևացնել, ցավի բաժանում կատարել չի:

### ԺՊԻՏՆԵՐ

Ես իմ դուրեկան ժպիտն ունեմ. ժպիտներն ունեմ: Ամենիզ դյուրեկան ժպիտը իմ դուրեկան ժպիտն է: Իմ այդ դուրեկան ժպիտը, ժպիտները, ցանկանում եմ միշտ լինեն, լինելով, բոլորին բաժին դառնան:

Ինձ դուրեկան եկած ժպիտը մերթ տեսնում եմ պարմանի տղայի կայտառ դեմքին, իր դասերում հաջողած պարագային: Մաղթանքս է պարմանի տղան ու տղաները միշտ կայտառախինդ լինեն, որպեսզի նրանց դեմքին ծաղկող իմ դուրեկան ժպիտները լինեն, մնան:

Իմ դուրեկան ժպիտը տեսնում եմ նաև ծաղիկը ձեռքին բռնած սիրահարված աղջկա ծիծղուն այտերին: Թող ժպտացնող ծաղիկն ու ծաղիկները, թող ժպտացող աղջիկն ու աղջիկները միշտ լինեն, որպեսզի նրանց այտերը ծիծաղախինդ դարձնող իմ դուրեկան ժպիտները լինեն, մնան:

Իմ դուրեկան ժպիտը հաճախ տեսնում եմ որդուն զրգվող մոր զվարթ երեսին: Բաղձանքս է որդին ու որդիները, զգվող մայրն ու մայրերը միշտ ժպտաղեմ լինեն, որպեսզի նրանց երեսները պայծառացնող իմ դուրեկան ժպիտները լինեն, մնան:

Իմ դուրեկան ժպիտը երբեմն տեսնում եմ զործատեղում հաջողութուն ունեցած բանվոր հոր ուրախ դեմքին, տուն գալուն, տնեցիներին ուրախ-զվարթ բարևելիս: Տենչանքս է բանվոր հայրն ու հայրերը միշտ հաջողության հանդիպեն, որպեսզի նրանց դեմքերը քաղցրացնող իմ դուրեկան ժպիտները լինեն, մնան:

Իմ դուրեկան ժպիտը տեսնում եմ մեծ հայրիկի, մեծ մայրիկի երեսներին: Օ, թարշամած այդ խոռոչավոր երես-

ները ինչպես են զվարթանում, պայծառանում, երբ իրենց թոռնիկները զրկած են լինում: Թող թարշամած, խոռոչա - վոր երեսները զվարթացնող թոռնիկները միշտ լինեն, թող թարշամած եւ խոռոչավոր երեսները միշտ զվարթանան, որպեսզի իմ դուրեկան ժպիտները լինեն, մնան:

Ես իմ դուրեկան-դյուրեկան ժպիտն ունեմ, ժպիտներըն ունեմ, թող նրանք բոլորին պատկանելով լինեն, - մնան:



Բեմասաց, քո սի՞ն խոսելուդ համար, թե՞ մարդկանց օգտին քո շխոսելուդ համար, քեզ չեն լսում, քո բեմասացությունը չեն լսում.

Դու չխոսես:

Գյուտարար, վնասակա՞ր գյուտ արած լինելուդ համար, թե՞ մարդկանց օգուտ չբերող գյուտ արած լինելուդ համար, գյուտարարությունդ չեն սիրում. չեն ուզում գյուտ անես.

Դու գյուտ չանես:

Հազարը մեկի համար լինելիս, ինչու՞ մեկը հազարի համար չլինի:



Շատ տարիների գործադիր կյանքով, առանց մի տող կարդալու, առանց մեկին մի բան հարցնելու, լոկ իմ տեսածով, իմ նպրածով, մեղվի տնտեսությամբ, փորձառական և տեսական հասույթից ինձ համար իմաստություն հավաքեցի:

Հավաքելով հավաքեցի, մինչև մի օր, օգտակարու - թյան ցանկությամբ, իմ այնքան հավաքածից ուզեցի երեք բան մարդկանց նվիրել:

Նվիրումի արձագանքից շատ մարդիկ եկան ստանալու, տանելու:

Նախ ասացի.- Կինը դավաճանող է: Քահ քահ ծիծաղեցին:

Այդ ինչ հնաբույր իմաստություն էր: Չգիտցող չըկար: Ինձանից առաջ միլիոններն էին բացահայտել ու տառապել: Եվ ոչ միայն տառապել, այլ և բոլորին հայտնել էին, այլ և կանխարգելիչ դարմանը ճարելու էին ելել:

Ապա ասացի.- ընկերը խաբեբա է: Հա, հա, ծիծաղեցին:

Այդ ինչ փորձառված իմաստություն էր: Ո՞վ չգիտեր: Ինձանից առաջ շատ շատերն էին խաբվելով տանջվել: Եվ ոչ միայն վշտացած տանջվել էին, այլ և բուժիչ բալասանը գտնելու էին ելել:

Հետո ասացի.- Կյանքը ունայնություն է: Գո՞՞ գո՞ ծիծաղեցին:

Այդ ինչ տեսական (անճիշտ) իմաստություն էր: Բո-

լորը լսել էին: Ինձանից առաջ այնքան մեծ հանճարներ , այնքան իմաստացած զիտուներ էին հայտնագործել, հայտարարել: Եվ ոչ միայն փսոսանքով հայտարարել էին, այլև սպեղանի որոնելու էին ելել. նրա հակառակը ապացուցելու էին ելել:

Իսկ ես, վերջալույսիս, հազիվ հասցնում էի ասել. Միայն ասել:

## ԿՅԱՆՔԸ

Կյանքը՝ որպես մի ցուպ ուղեցուլյց, ինձ առաջնորդեց, ապրել սովորեցնելով, ապրել տալով:

Կյանքը՝ որպես մեծ հայր փորձառու, ձեռքիցս բռնած, հոգատար պարտավորությամբ ինձ դաշտ ու հանդ տարավ, խոր ձորեր իջնել պարտադրեց, բարձր սարեր մագլցել մղեց:

Ապրել բարձրադիր մագլցումով:

Կյանքը՝ մի ուրու, մեկ եղավ շոշափելի, տենչալի. մեկ եղավ ոգեղինացած կապույտ երագ, կարոտ թողնելով...

Կյանքն ու ես իրար ծուլված՝ եղանք ու կանք, անբաժանելի սիրողների նման ապրելը սիրելով. բարի ապրել ձգտելով:

## ՄԱՅԹԵՐԻ ՎՐԱՅԻՑ

### Ա

Մայթեր, մայթեր, ինչ լայնք ու երկայնք ունենաք. ինչ տեսք ու հիմք ունենաք, դուք միշտ էլ մայթ եք կոչվում:

Մայթեր, մայթեր, ձեր վրայից ինչ ցավեր ու ծիծաղներ են հոսում, դուք ինչ դեպքերի ականատես եք դառնում...:

Մայթով քայլելիս՝ երկու տխուր դեմք տեսա. զգացված և ապրումով տիրամած, երկու թախծադեմք տեսա:

Մի փարթամ խանութի առջև ից անցնում էի: Տեսա նրա տերը գնորդի չզոյուլոյունից՝ տխուր, վշտով համակված, աչքը մայթի անցորդներին զամած՝ մաղթանքով, որ նրանք ներս գնային, գնում կատարեին, նայում էր...

Ինչ հոգսալից թախիծով:

Մայթով քայլելիս շարունակելիս՝ տեսա միջանասակ մի մարդ, քուրջերի մեջ ծվարված, դեռ մի ոտքն էլ գածի մեջ կապած, օրհացի կարոտանքով, ծով տրտմությամբ ձեռքն անցորդների գուլթին էր կարկառել:

Ինչպիսի հուսադիր թախիծով:

### Բ

Մայթեր, մայթեր, դուք միշտ նույնն եք. անգամ ձեր եզերքին բազմաթիվ շենքեր բարձրացված լինեն, անգամ թափուր մնացած, ավերակ գետիներ լինեն:

Մայթեր, դուք նույնն եք, անգամ գեղանի կնոջ կողքից պառաված կին քայլելիս լինի. անգամ պարմանի ու ժիր տղայի կողքին գառամած, կորաքամակ ձերուների քայ-

լեւիս լինի...:

Այս մեր մեծ քաղաքի նշանավոր փողոցներից մեկի մարդալից մայթով քայլում էի:

հնձանից առաջ մի երիտասարդ մարդ պերճորեն հագնւած, բարձրուղեշ ու ամրաքայլ զնում էր: Մեկ էլ թաշկինակը գրպանից հանելիս՝ մի բան ցած ընկավ: Երկտակ ծալված մի թղթադրամ էր. երևի վերջին պահին զըր պանը խոթած...: Բայց նա չփորձեց կոանալ, ցած ընկածը մայթի վրայից վերցնել...: Մեկ ուրիշը վերցրեց՝ նըրան տվեց:

Որպիսի՞ սնամիտ հպարտութիւն:

Նույն մայթով քայլելիս շարունակելիս, մի կույր տղա տեսա. արևախանձ դեմքով, ծալապատիկ նստած, բացած ափերովը մայթն էր շոշափում, ավելելու պես, կորցըրած զրոշ դրամը որոնելով:

Որպիսի ծով կարոտութիւն:

Նույն մայթի վրա:

Գ

Մայթեր, մայթեր, իմ սիրելի մայթեր. որ պճնված կանանց զբոսանքով գարդարվում էք. որ կանանց հրապուրիչ կաքավաքայլով ձեզ մոտ էք ինձ քաշում. մայթով քայլելը տենչալի դարձնում:

Մայթով քայլում էի: Գնումի համար մի քանի խանութներ էի հանդիպել. մի քանիսին հարցրել էի. մինչև մեկը բարի էր եղել փնտրածս ապրանքի ծիշտ տեղն ու հասցեն տալ:

Հասցեն մտքումս՝ աչքս որոնումի՝ մայթով քայլում էի:

Դիմացից մի երիտասարդ կին երևաց իր վեց տարեկան թվացող երեխայի ձեռքից բռնած: Ինձ մոտենալիս՝

նկատեցի, որ նրա զրավիչ դեմքի վրա մի ժպիտ ծաղկեց, շոայլորեն հոգեհմա դարձնելով...: Թվաց ծանոթ է, ինձ անակնկալորեն տեսած լինելու համար ժպտում է: Բայց ոչ, մենք բոլորովին անծանոթներ, օտարներ էինք:

Ջզլխիչ ժպիտովը համակված՝ մղվեցի մտորել, նա իմ ինչի՞ս վրա է ժպտում . անգամ ծաղրալից ծիծաղում: Փորձեցի ինքս ինձ տեսնել . չլինի՞ փողկապս չկապած տնից դուրս եմ եկել: Չլինի՞ մագերս չհարդարած...:

Սակայն, բարեկամներ, հիմա ով՞ է նման բաներին կարեւորութիւն տալիս:

Եվ ահա երբ արդեն բավականին մոտեցել էինք, դիմաց-դիմաց գալու պես էինք, որ իր մորն ընկերացող մա նուկն իր մատիկը մեկնեց՝ ցույց տալով ինձ հետեւող... մի շուն:

Պարզվեց: Մանկիկը շուն տեսած լինելով ուրախացել էր, (ոմանք այնպես սարսափած փախչում. լաց են լինում) եւ մանկական վարակիչ խինդով-ժպիտով իր ձեռքից բռնած սիրելի մորը վարակել էր՝ զրավչորեն ժպտալ տալով:

Մանուկի՞ ժպիտ: Փոխադարձորեն ես եւս վարակվելով սրտաբաց, թեթեւացած ժպտացի:

Դ

Մայթեր, մայթեր, ես որ ձեզ այնքան սիրել եւ սիրում եմ, ես որ ձեր մի ավագ քարին ոտքով անգամ չեմ խփել. դուք, մայթեր սիրելի, գեթ ինձ պիտի խնայեիք, ինձ դառն փորձութեան պիտի շտանեիք:

Առավոտ կանուխ գործատեղիս հասնելու համար շտապով քայլում էի: Մայթը լայնքով էր, մայթը թափուր էր եւ ես թափով քայլում էի: Միտքս միայն կամակոր կերպով զրասենյակում պատահած մի դեպքով էր կլանվել...:

Նախորդ օր ինձ ձեռացած էին համարել, պաշտոնակիցներս ինձ ձեր էին կոչել: Իսկ ես խոսքով, խոսքերով

ապացուցել էի... երիտասարդ լինելուս: Պաշտոնակիցներս տարեցիս հարգած լինելու համար համաձայնվել էին, թե՞ իսկապես համոզվել էին... լռելով:

Դեռ այդ մտորումով մայթով քայլում էի: Հանկարծ մեկը թեթեւ զեփյուղոյի նման թեթեւակի կողքիցս անցավ. առաջ էլ ընկավ: Նա ինձանից բարձր չէր, նա ինձանից զեր չէր: Ես անակնկալի եկա. խանդեցի: Ինչպե՞ս անցավ ինչու՞ առաջ ընկավ: Գրգռված վճռեցի ու փորձեցի նրան հասնել ու... անցնել:

Մեկ երկու քայլ, եւ զգացի, որ շունչս հեւքի է վերածվում, որ մեծաքանակ ուժ եմ սպառում: Մեկ երկու քայլ եւս, եւ զգացի սրունքներիս ցավելը, հոգնելս...: Ես երկու քայլ էի առնում, նա երեք քայլ էր վերցնում: Մի վայրկյանի մեջ իմ վերցրած չորս քայլին՝ նա վեց քայլ էր վերցնում: Նա ինձ անձանոթ էր, նույնիսկ նա չնկատեց իր հետ մրցումի լծված լինելս...:

Սակայն ես, ով մայթ, նրա անհեւք հեռացող ծոծրակին նայելով, նրա մութ զիշերվա պես սեւ մազերը տեսնելով, զգացի որ չեմ կարող նրան հասնել:

Օ, թեկուզ թաքուն, բայց գիտակցորեն ընդունեցի, որ նա՛ երիտասարդ էր եւ առաջ անցավ, իսկ ես ձեր ու տարեց էի՝ ետ մնացի:

Բայց դու, իմ սիրելի մայթ, հանուն քեզ այնքան սիրելուս, զեթ դու ինձ պիտի խնայեիր, պարտութամբ վերջացող մրցակցության պիտի չմղեիր:

## Ե

Մայթեր, մայթեր, ինչ զարմանազան պատահարների ակնատես եք լինում: Ինչ բազմազան բաներ եք թույլ տալիս տեղի ունենան. եւ միշտ էլ մեծ սարի անհոգու - թյամբ լուռ ու անտարբեր եք մնում:

Արդյո՞ք ձեր վրա կատարվածը դուք չեք տեսնում, չեք զգում:

... Չյուն ծմեռ օր էր: Առատ ծյուն էր եկել և դեռ արագ զալիս էր: Նախորդ օրը լրիվ ծյունել էր. հիմա էլ անձրեւն էր նրան միացել:

Չյուն ու անձրեւ. անձրեւ ու ծյուն հովի երգեցողությամբ:

Մեծ քաղաքի փողոցներից շատերը ծանր ծյունի տակ էին թաղվել. ոմանք էլ ցեխով ու ջուրով էին ծածկվել:

Մի քիչ բանուկ փողոցի մայթով զալիս էր աղքատ հազնվածքով, տարիքոտ մի մարդ: Նույն մայթով գնում էր կոկիկ ու տաք հազնվածով, անձրեւանոցը գլխավերելում բաց պահած միջհասակ մի մարդ:

Չյունն ու անձրեւը զրկախառնված դեռ ցած էին իջնում, դեռ դադար առնել չէին ուզում: Մայթի կեսը պաշտպանված էր պատշգամներով, մյուս կեսը սակայն ցեխոտվել էր. տեղ տեղ ջրալի ծյունով էր պատվել: Աղքատ ու տարիքոտ մարդը աշխատում էր ոտքերը չթրջելու, իր գլուխը չթացանալու համար, զգուշությամբ, մայթի չոր ու ցամաք մասերի վրայով քայլել:

Նրանք իրար հանդիպեցին: Դեմ դիմաց կանգնեցին:

Եվ ահա անձրեւանոցով զինված մարդը այնպիսի ճարպիկ ձեւով մայթի չոր մասի վրա կանգնեց, ասես մայթի այդ մասն իր հորենական սեփականությունը լիներ. որ տարիքավորը հարկադրվեց մայթի մյուս մասից, թաց տեղից անցնել:

Իսկ, դու, ակնատես մայթ, դու տեսար ու լռեցիր:



Մի անգամ ինձ մի օտար մարդու հետ ծանոթացրին : Ասացին, թե քանաստեղծություն եւ թե պատմվածք է գրում:

Ես նայեցի նրան, նա էլ նայեց ինձ: Հարկ էր նայելինք իրար, ոչ որպես ըմբիշների, այլ որպես նույն չաստվածունհու երկրպագուների:

Ես իմ այնքան տարիների մարդ ճանաչելու փորձառությամբ որքան նայեցի, այնքան նրա վրա ոչինչ չգտա որ նրա գրող լինելը, քանաստեղծություն և պատմվածք գրելը ապացուցեր:

Փոխադարձորեն նա ևս նայեց ինձ: Վստահորեն մտածելով, - ո՞վ է այս մարդու հալալ քրտինքը կորզել. ո՞վ է այս մարդուն այդպես վատորեն խաբել...:

Ապա նրա աչքերում կարդացի.

- Ի՞նչ բան ես ստեղծագործել պիտանի մնացող: Ի՞նչ բանի վրա ես զբաղված հիմա:

Դեռ չէի պատասխանել, որ մի այլ մարդ, տարագալիք, եկավ: Մենք անմիջապես, դեռ քիչ հեռվից նրան ճանաչեցինք, և հարգալից բարեւով ճամփեցինք:

Նա Սրենքը գործադրել տվող էր:

Բայց նա մեզ, երկու գրողներին, շատ անկարեւոր մարդու տեղ դրեց. հագիվ մեր բարեւն ընդունելով:

Մենք համազգեստ չունեինք:

## ԻՆՉ ՀԱԿԱՍԵԼՈՎ

Համախ սուր ցավով ափսոսանք եմ ունենում: Շատ համախ խոր մտորումներով ափսոսանքի անվարձ պահեր եմ ունենում:

Ախ, ափսոսանք...: Դառն է ափսոսանքներ ունենալ:

Մի օր չէ, շատ օրեր. եւ հենց դեռ երեկ էր...:

Իմ ծանոթ հարուստներից մեկը, իր հյուրասիրությամբ ստավածին, իր տան ճոխ կահավորանքը, իր տան անկյուններում մրացրած թանկագին իրերը, պատերից կախած, գետնին տարածած քարձրագին զորզերը ցույց էր տալիս...: Անշուշտ, ասես որպես վարձագին, նրանց գնման պահերը, պարագաները մտաբերելով, նրանց ամեն մեկին գնելով տուն բերելու, ունենալու դրական պարուհանքները վերապրելով:

Ցույց էր տալիս եւ ակնկալում էր դրվատվելով մեծարվել...:

Հիշեցի: Չքավոր էր: Տանջվեց ու շատ նեղություններ քաշեց: Իր համար լավ տնտեսություն ապահովեց: Հետո ունեւոր դարձավ. կառույցներ ունեցավ, հարուստների վարքով վարակված՝ նրանց կարգը դասվեց:

Մտաբերեցի: Նա նվիրատվություններին երբեք չէր մասնակցում: Հանգանակություններից հեռու էր մնում: Առատածոնություն թովիչ ու պարուրիչ պահեր չէր ունենում: Սրտին երբեք չէր ունկնդրում...: Միշտ մատները սեղմած, միշտ իրեն չքավոր, չունեւոր ցուցադրելով, միշտ էլ մեկը հարյուրի, հարյուրը՝ հազարի վրա

էր բարդում:

Բարդումների բարձրացումով հարստության հասավ ,  
հարստացավ:

Ես, աղքատս, այդ ամենը մտաբերելիս՝ ակսոսացի :  
Ափսոսացի, որ ինչու՞ նրա նման չեղաւ. ես, որ կարող  
էի, տվյալներ կային...: Ես, որ հիմա ուզում եմ հա-  
րուստ մարդկանց ընծայված պատիվից ինձ եւս տան, հա-  
րուստ մարդու մեծարանքից ինձ համար բաժին հանեն...:

Ես, որ հիմա այնպես ուզում եմ... ինձ հակասելով



Բայց, ակս, այս ինչ՞ ահավոր վատ բան արեցի: Ինչու  
սիրաս բացած՝ այսպես զեղեցի... Ես, որ ուխտել էի  
երդումներով անվերջ սիրել:

Ս՛գարմանքով թաթավուն անլուծելի, անդարմանելի  
իմ ակսոսանքներ... ինչու՞ երիտասարդության օրերին՝  
այս ծերությանս օրերի խոհականությունը, հասուն ի -  
մացականությունը չունեցա: ինչու՞ հիմա, այս ծերու-  
թյանս օրերին, այն երիտասարդության օրերի կորովն ու  
կենսահորդ հրայրքը չունեմ:

Երանի՛ մարդ ու մարդիկ երիտասարդությանը ծերու -  
թյան խելքն ու հասունությունն ունենան. իսկ ծերու-  
թյանը՝ երիտասարդության եռանդն ու կորովը ունենան:



Ծովափին՝ ավազ էի հավաքում: Ինքնամփոփ ու ջանա-  
ղիր՝ ավազ էի հավաքում, մանկացած:

Կուտակման իմ հագուրդը, իմ մանկությունը, այդ -  
տեղ փորձարկման էր ենթարկվում:

Երբ հոգնած կանգնեցի հավաքածս ավազի կույտը դի-  
տելու, հավաքածիս համույքն ըմբոշխնելու, ահա մի գող  
ալիք, շաշյուն շառաշյունով, բերանին ձյուն փրփուր,  
հուժկու գրոհով եկավ:

Եկավ: Ասես հրահանգ ուներ ջանքով ու ճիգով կու-  
տակածս քանդելու, ամենակուլ, անկուշտ ծովին հանձնե-  
լու:

Նրա արածը բնակա՞ն, թե՞ պատահական էր...:

Բայց ես կողոպտված, սնանկացած մարդու պես, կո -  
րուստիս ետեւից խոր ցավով նայեցի, կորած- կորցրած  
աշխատանքիս, կուտակածիս կորուստը վշտով ու տրտմազին  
սզացի:

Իմ հավաքածը համեմատած ծովի անհաշվելի, անչա -  
փելի ունեցածին, որքան չնչին էր. աննշան. հյուլե...  
բայց ահա այդ քչիկն էլ խլվեց, ամենայն անգթությամբ,  
հափշտակությամբ խլվեց:

Սրտիս ցավը որքան մեծ, որքան խորն պիտի լիներ,  
եթե ունեցածս, հավաքած-կուտակածս ավելի մեծ, ավելի  
շատ լիներ.

Ունենալով այնքանների գրկվածության հուշերը:

## ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հարց.- Նա ինչու՞ է ինձ այսքան ուժգին նախանձով ատում:

Պատասխան.- Որովհետև ես տենչացել եմ, որ նա բարի լինի, բարի գործեր կատարի:

Հ.- Նա ինչու՞ է ինձանից այդքան խոր քենով խոռով մտում:

Պ.- Որովհետև ես պահանջել եմ, որ նա բարու-թյան քաղցրութունը հասկանալու, ըմբռնելու համար փորձի բարի դառնալ:

Հ.- Նա ինչու՞ է իմ մասին այդքան թունալից գրո-պարտություններ կատարում:

Պ.- Որովհետև, ավաղ, չկարողացավ ինձ ունկնդիր լինել:

Հ.- Նա ինչու՞ է ինձ այդպես թշնամու պես ոխա-կալած հալածում:

Պ.- Որովհետև իմ ոտքերը միշտ բարության հա-մար են շարժվել, եւ բարության համար ծամփա գնալով, նրանից միշտ հեռու մնացին:

Արդյունք:- Մենք չենք կարող զուգահեռ գնալ:

Չկարողացանք: Իսկ թե մեր սրտերը, մեր գործերը, մեր ոտքերի հակամարտիկ երբև իցե պիտի ընթանա՞ն...:

Երբ նա ինձ ատեց, առանց սիրո ապրել չկարողանա-լուն, կարոտ սրտով վեր ելավ, սիրելի փնտրելու գնաց:

Եվ նա կճարի: Իսկ երբ ճարի, զարմացած, անզամ գայ-րույթով կտեսնի, որ իր այդ գտածը... իր ատածն է:



Բնության բարի դեկը ձեռքում ամուր բռնած, վստա-հաքայլ զալիս է նա.- եղանակը:

Որ մեկ ցրտում է՝ սառեցնելով, մեկ շոգում է՝ քրտնեցնելով: Մեկ էլ գեղուհու նման ժպտում է դյու-թանք առթելով, մեկ էլ սզավորի պես թախծում է վշտաց նեղով, նա,- տարվա եղանակը:

Հորձանուտ հոսանքին հեծած, թեև անտեսանելի, թեեւ ձուլված ու լուծված, բայց անվրեպ, անսայթաք վազբով, սահուն հոսքով զալիս է նա,- եղանակը:

Որ մեկ ծշում է՝ ցավացած, մեկ հուզվում է՝ ըզ-գացված: Մեկ էլ զվարթացած մանուկի նման ժպտում է. մեկ էլ զարմացած-զայրացած մարդու պես բացազանչում-բողոքում է նա.- երգի եղանակը:

Բայց ահա նաեւ զալիս է...: Հույսերի ու հույզե-րի փոթորկումները խուրձած, նպատակասլաց. սիրտ ու միտքը նշտրակներով բուժելու նկրտումներով վարպետա-ցած՝ զալիս է նա.- Հեղինակը:

Որ բնության բոլոր եղանակներին ունի՝ տեսլականաց բած, որ երգերի եղանակներին խոհալից խոսքեր հագցը - նելու վերատու շնորհն ունի՝ ներշնչված:

Եղանակներին, սրտին ու մտքին զերելու հմայքով գինված զալիս է նա.- մարդ Հեղինակը:

## ԵԿԵՔ

Ա

Այսօր ես տխուր եմ.

ինձ այցելող բարեկամներ, ինձ այցի չգա՞ք:

Այսօր ես վիշտ ունեմ.

իմ ազնիվ բարեկամներ. իմ վիշտը կիսելու չգաք:

Այսօր ինձ դժբախտություն է պատահել.

Այսօր ինձ համար դժբախտ-սև օր է.

եվ որպեսզի ձեր դեմքը իմ այս դժբախտությամբ չստվերեք, և որպեսզի այս իմ դժբախտությամբ ձեր ա-  
նորյա ուրախությունը չդառնանա, խնդրում եմ, իմ թան-  
կազին եւ պատվական բարեկամներ. որ դուք իմ տան հաս-  
ցեն, որ դուք իմ գոյություն մասին իսպառ մոռանաք, չը  
գաք:

Բ

Եկեք, իմ բարեկամներ.

Այսօր ես ուրախ եմ, այսօր ինձ այցելության եկեք:

Թող այսօրվա ուրախությունս միայնակս չվայելեմ:

Այսօր խնդություն ունեմ.

Եկեք, սիրելիներ, այսօր ինձ այցելության գալու  
իսկական օրն է. ես խնդությամբս ձեզ բերկրանք եմ ըմ-  
բոշխնել տալու:

Այսօր ցնծությանս օրն է.

Այսօր հարսանիք ունեմ:

Եկեք, այսօր եկեք. անպատճառ եկեք. իմ սիրելի և  
հարգելի բարեկամներս, որպեսզի խայտանքով հարսնեւոր  
դառնաք, որպեսզի իմ ցնծությունից, իմ հարսանիքից  
ձեր բաժինը ստանաք:

Եկեք, եկեք, ինձ առանձին մի թողեք:

Չէ՞ որ ես մանկուց վարժվել եմ, օ՞թրժվել եմ ,  
տառապանքին ու տանջանքին, վշտին ու սուզին միայնա-  
կըս տոկալ...: Բայց հազվադեպ ուրախության պահին, ո-  
րին ես չեմ վարժվել, հարկ է ու պիտի բաժնեկիցներ  
ուրեւնամ:

## ԱՌԱՋ-ՀԻՄԱ

Առաջ՝ երիտասարդությանս հրայրքոտ օրերին, ես  
հուր սիրով քեզ սիրելով, խնդազին սիրով խանդեցի:  
Ով գեղեցկություն. դու ցանկալի երկրպագություն պար-  
գեւող քրմուհի էիր. քեզ համբուրելով երջանկանում էի:

Հիմա՝ ձերությունս այս ուշ օրերին. հագեցածի խոր  
հիասթափությամբ, քեզ առելով առում եմ: Ով պժգալի ցե-  
խաշեն տգեղություն. ես քեզանից խորշելով խորշում եմ:

Առաջ՝ լուսատենչ սրտիս այգ-արշալույսն էիր. սի-  
րատենչ սրտիս սիրուհին էիր: Բոցավառ խոսքերով քեզ  
գովերգելով զինովցած արբում էի:

Հիմա՝ ամպամած դժխեմ զիշեր ես դառել. վհուկի  
պես պժգալի ես դարձել: Ձեզ անգոսնելի համարելով,

քեզ անտեսելով, քեզանից փախչելով եմ հիմա բերկրում:

Առաջ՝ կյանքս քաղցրացնողը դու էիր. շաբար էիր: Նորաբաց ծաղիկի քնքշությամբ, արբեցուցիչ եւ զգլխիչ բուրմունքով օժտված էիր: Ես պտորաստ էի ամեն ընդհանուր մեն ինչս քեզ գոհաբերել:

Հիմա՝ մահաբույր զարշանք ես դարձել, թոշնած ու դեղնած ես: Անպատի չոր փուշի նման քո ժպիրն դեմքը իմ սիրտն է խոցում, դառնացնում:

Առաջ՝ քեզ տեսնելուն, ես օրերս էի ողջունում, երջանկացած: Երիտասարդական տենչանքը բերկրալից դեպի քեզ էր միշտ մղում, ամեն ինչ թովչական դարձրած:

Հիմա՝ քեզ ուրանալն եւ մոռանալն է իմ հոգուն հանգիստ պատճառում: Հագեցածիս քայլերը ինձ քեզանից հեռացնում են:

Առաջ՝ դու կայիր որպես կյանքիս արշալույս, որպես տենչալի ու կենսալի:

Հիմա՝ պառաված-թառամած, ատելի մսակույտ ես խորշելի:

Դու լուսին էիր սիրավառ, սե ապի տակ մտար: Իմ վառ ժամը անցավ, մառ ժամս է հասել:

## ՔԱՂՑՐ

Ամեն ինչ քաղցր, քաղցր թող լինի: Այն ինչ պիտի լինի թող քաղցր, քաղցր լինի:

Քաղցրն էլ քաղցրությամբ թող լինի, որպեսզի քաղցրացված քաղցր լինի:

Խորհուրդը, անգամ բարին, քաղցր-քաղցր թող լինի. որպեսզի ունկնդրումը քաղցրությամբ կատարվի, որպեսզի գործադրումը քաղցրությամբ կայանա:

Սերը, այնքան երգված, այնքան հարգված ու ներբողված, երբ դառնությամբ է մատուցվում, միթե՞ քաղցր է... Սերը սիրալիք քաղցրությամբ թող լինի, սրտի քաղցրությամբ թող մատուցվի:

Մանավանդ համբույրը, հրաժեշտի կամ հանդիպումի, միշտ քաղցր, քաղցր թող լինի, քաղցրացված համբույրն է սիրելի:

Խնդրանքը նույնիսկ, կատարման ակնկալությամբ, քաղցր-քաղցր թող լինի. դառնադեմքի, կոշտ բառերով խնդրանքը միշտ մերժելի է: Քաղցր խոսքով խնդրանքն է միշտ ընդունելի:

Մերժումը, որ լսողին ցավ ու վիշտ է պատճառում, քաղցր, քաղցր թող լինի, քաղցրությամբ թաթավուն մերժումի ցավն ու վիշտը թեթեւ է լինում:

Հրահանգը, որ տրվում է վերից ու մեծից, քաղցր-քաղցր թող լինի, որպեսզի թշնամու հրամայելու պես չըլինի, որպեսզի գործադրումը կամավորությամբ ու սիրով լինի:

Ասում են, որպես թե, կյանքը ունայն է: Այդ ծանր

ու անձիշտ ունայն կոչումն էլ թող քաղցր-քաղցր ասվի: Քաղցրությամբ ասված կյանքի ունայնությունը քաղցր ու դուրալի կլինի, սրտին ծանր կապարով չի նստի:

Իսկ եթե պիտի պատժեն, պիտի սպանեն, - նախընտրելի է, թեւադրանքս է չանեն, - թող քաղցրությամբ պատժեն, թող քաղցրությամբ սպանեն:

Ամեն ինչ ու բոլորը քաղցր ու քաղցրությամբ:



Ձինվորագրված նպատակներիցս մի մասը կյանքի զոռ գուպարի ուղմադաշտում քաջաբար զոհվեցին, ընկան մարդեղնացած:

Փանք նրանց հիշատակին:

Սակայն ես, զորավարս, որ գլխովին զբաղված, ջանադիր ջանքով կլանված էի, (եւ կամ դեռ), մյուս նպատակներս հաշոգությամբ պսակելու տոգորումով, ժամանակ չգտա, չունեցա, զոհված այնքան հերոսներս դամբանելու, նրանց շիրիմներին խաչ դնելու:

Սակայն սրտանց նրանց հանգիստ եմ մաղթում:

Որովհետեւ հավատացել եմ, հավատում եմ, հանուն նրանց թանկ ու սիրելի հիշատակին, ինձ հառաջ, միշտ հառաջ գնալը, թե ինկարկելիք խունկ է, թե մեծարելիք հարզանք է:



Մորեղբորս՝ Մովսես Գասպարյանի հիշատակին

Մի որեւէ տեղ ճամփորդելիս. մշտապես ճամփորդություններ կատարողս, իմ ճամփան հայտնի, լուսավորված էր լինում: Բայց այս մի ճամփան ինչու է մթամած, խավարապատ: Ես դժվարանում եմ քայլ փոխել:

Արդյո՞ք անհայտության ուղեւոր եմ:

Մի որ եւէ տեղ գնալիս, իմ ճամփան գիտեի: Բայց այս անգամ այս մի ճամփան շատ է անծանոթ, օտարային: Ես չեմ իմանում ոտքերս որտեղ եմ դնում:

Քայլափոխումով գնում եմ, թե՞ ձեռամբարձ տարվում եմ...:

Մի որ եւէ տեղ գնալիս, սրտազրավ նորություններ էի տեսնում, զվարճանում էի: Այս անգամ սակայն ինչու՞ այս ճամփի սկիզբն անգամ ատելի է:

Միթե՞ անանց, անընկեր, անդարձության եմ գնալու:

Մտարսափը անհայտության, անվերադարձության:

Բայց ահա պարտադրվել եմ նորերին թողնել, հսերին միանալ...:

Մթասքողությամբ քողարկված, անհայտին տանող այս ճամփի որպիսությունը ոչ ոք չի իմացել, երբ իմացել հայտնել չի կարողացել. ես էլ թող չիմանամ, աշխարհիկ աչքերով ոչ ոք չի տեսել, թող ես էլ չտեսնեմ:

Մեկնումի սկիզբը ինձանով չի սկսվել, կանգնումի վերջակետն էլ ինձանով չի դրվելու:

Թեեւ հապաղելու առիթ չունեմ, գնալու եմ, սակայն գիտեմ, խալարամած եւ մթամած այս ճամփան կլուսավորվի, անվերադարձ այս ճամփից մնայուն նորադարձություն կը լինի... լուսահիշատակությամբ:



Ես հաճախ եմ ասել, որ հայը նախ խոսող է, ապա գործող: Գործելուց ավելի՝ հայը խոսող է:

Մինչդեռ օտարը, հային հյուրընկալողը, նկատել եւ հաստատել եմ, նախ գործում է, հետո միայն խոսում. հետո է խոսեցնել տալիս:

Մտադիր եմ այս հարցի շուրջ մի ընդարձակ ուսումնասիրութիւն գրել...:

Ախ, տեսա՞ք, արդեն նորից՝ որպես հայի նախ խոսեցի. հայտնեցի...:

Զէ, բարեկամներս, թեկուզ մի անգամ էլ եղել է, թողեք ես մի օտարի պես գործեմ, ես (մենք), որ այն - քան տարիներ ու դարեր օտարների հետ, օտարների երկրում, կողք կողքի ապրել. սիրալիր հյուրընկալվել եմ, հոգատարութեան արժանի դարձել եմ, բայց միշտ, ոչ միայն անունով, այլեւ հայավարքով. գործելակերպով նույն հայն եմ մտացել: Հիմա տեղն է ու հարկադրանք, անգամ վերադարձիս նպաստող, որ ես օտարի պես լոնլյան գործեմ, կատարելիքներիս մասին նախապես չխոսեմ, չհայտնեմ:

Ես, որ հյուրընկալ օտարներից այնքան վատ վարքեր յուրացրել եմ, ես ընդունակս, ինչո՞ւ այս մի հատիկ լավը չսովորեմ. սովորելով չգործադրեմ:

Հիմա, երբ այնքան օգտակար անելիքներ կան չհետաձգելիք...:

## ՇՂԹԱՆԵՐ

Շղթաներ...:

Շղթաների համար ձեռքեր են պետք: Ձեռքեր, որոնք գործած լինեն չարիք-բարիք. անշուշտ և գլխավորաբար չարիքն ավելի շատ ու մեծ:

Ոչինչ գործած ձեռքերին ոչինչ են հազցնում:

Շղթայված ձեռքերը դեռ բարիք գործել կարող են: Շղթայված ձեռքերը մերթ ու հաճախ շղթաները ցած կթափեն. բարիք կգործեն:

Ամուլ ձեռքեր, ձեզ ինչ շղթա է պետք. ձեզ ի՞նչ հազցնեն:

Ոմանց սրտերին սիրո շղթա են հազցված. չեն կարող ուրիշ սերեր ունենալ: Ոմանց ձեռքերին պարտականութեան շղթա կա ազուցված, չեն կարող ծուլլ նստել: Ոմանց ոտքերին կայքի ու կալվածի, ունեւորութեան - շղթա կա կապած, չեն կարող զնալ այնտեղ, որտեղ նրանց սիրտը կցանկանար, հոգին պիտի առաջնորդեր...:

Սրտի ինչ հափրանքներ կունենային...:

Իսկ դուք, անշղթաներ. դուք ի՞նչ էք, ովքե՞ր եք:



Որքան խնդրեմ, աղերսալից որքան հայցեմ: Մարդիկ հոժարակամ եւ անմերժում որքան թախանձանքս կատարեն, ինձ զոհացնեն:

Ծաղիկը ջուր խնդրում է: Ծաղկասերն է աճապարում ժամանակին նրան ջուր տալ, արել տալ, - բուրմունքի՛ ա- կընկալությամբ, իր դեմքը նրա բույրով օծելու խնդրա- մտությամբ:

Ես ի՞նչ ունեմ տալու: Ի՞նչ ակնկալություն կարող եմ հագեցնել: Ես, որ անվերջ աղերսալից խնդրում եմ, հայցելով թախանձում եմ:

Փոխանակ սենյակիս մթությունը վանել խնդրելու, թող ճրագս վառ պահելու միջոցը հայցեմ:

Բայց փոխանակ ճրագիս վառ պահելու միջոցը հայցեմ, թող առանց ճրագի լույս ունենալու, միշտ մշտավառ լույ- սի մեջ լինելու միջոցը խնդրեմ:

Ո՛չ, փոխանակ միշտ լույսի մեջ լինելը հայցեմ, թող իմ էությամբ եւ իմ զոյությամբ արժանի համարվեմ ան - հայց հատուցվելու: Թող իմ գործունեությամբ պիտանի դառնամ բարի՛ ակնկալությամբ վարձատուլյոց լինելու: Ծաղիկի՛ նման, ծաղկանման:

Որպեսզի անվերջ չխնդրեմ, որպեսզի մնայուն խնդրա- կու չմնամ, թող ահագանգ տալով թաքուն բուրբ ուժերս զորակոչեմ՝ ինձանից վանելու, վտարելու, ինձ արգահատե- լի, ինձ անարգելի դարձնող, խնդրելու մղող տենչանքը պարսավելի:

Թող ունենալու, շատ ունենալու տենչանքի տիրակա - լության տակ չլինեմ, չմնամ:

## ՄՊԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սպանում էին. սպանում են:

Առաջ՝ լուսապարզեւ արև:ին երկրպագելով պաշտած չլինելու համար սպանելով սպանում էին:

Հետո՝ լուսատու արեւազնդին պաշտած լինելու հա- մար տանջահարելով, սպանելով սպանեցին:

Առաջ՝ ոսկե կուռքին նվիրվածորեն խոնարհած, պաշ- տած չլինելու համար սպանելով սպանում էին:

Հետո՝ անկյանք կուռքին, մարդու ձեռակերտին պաշ- տած լինելու համար չարչարելով, սպանելով սպանեցին:

Առաջ՝ որդի Աստծո Հիսուսին հավատքով պաշտած չը- լինելու համար սպանելով սպանում էին:

Հետո՝ նազովրեցի Հիսուս մարդուն պաշտած լինելու մեղադրանքով սրախողխողելով, սպանելով սպանեցին:

Առաջ՝ երկրպագելով հավատացողին, հետո՝ ըմբոստա- ցած չհավատացողին. առաջ՝ երկյուղածորեն պաշտողին . հետո՝ անհնազանդ ու անհավատ չպաշտողին սպանելով սպա- նեցին:

Այս սպանելով սպանողը միթե՞ սպանած լինելու սպա- նասիրությունից չի՞ սպանում:

Առաջ՝ էլ սպանում էին. հիմա էլ սպանում են.

Սպանասիրությամբ:



- Հիմար շեմ.- գանգատեց:
  - Մտածում ես.- հավաստեցին:
  - Խենթ շեմ.- բողոքեց:
  - Տենչում ես.- հաստատեցին:
  - Անմիտ շեմ.- գոռաց:
- Քմծիծաղ տալով, մատով սպառնացին.
- Մեր վնասին ես գործում. եթե քո վնասին չես անդրադառնում:

Արդ՝ մարդը ի՞նչ է, երբ մտորելով մտածում է. մտածելով տենչանքին է դիմում. տենչանքով անհասին է ձգտում:

Հիմար, խենթ, անմիտ:

Ո՞վ է գյուտ արել. ո՞վ է մեծ կտուցումներ կառուցել, ո՞վ է մտորելով նոր մտքեր հղացել, ո՞վ է մտահղացմամբ երկունքված բարիքի ձգտել:

Ո՞վ է մարդկանց շահերը գիտակցելով. մարդկանց, աշխարհի ընդ որ մարդկանց ուշադրությունն է հանձնել:

Դեռ՝ ո՞վ է շտաժվելիքին ձեռնարկել. ո՞վ է հանդրանել անձգտելիին ձգտել. ո՞վ է անկարելիին թողչք տվել. թեևսվորել, մարդուն՝ մարդ կոչվելու իրավունքին մղել.

Անձնուրաց հիմար- խենթ- անմիտը մարդացած, մարդասեր դարձած:

## ԳՐԵԼ

- Չգրելը, թույլ գրելուց նախընտրելի, ավելի հանձնարարելի է, ավելի ձեռնտու է.- մտորեցի, ու զըրիչս ցած դրեցի:

Գրասեղանից հեռանալիս մտածեցի՝ թերևս ոմանք կուզենային այդպես լինել, ես չգրեի:

Բայց ահա մեկը մեջիցս գլուխ բարձրացնելով, ըմբոստաբար առարկեց.

- Ինչո՞վ պիտի մարզվես. ինչպե՞ս պիտի տաշվես, հղկվես: Դու ինչով պիտի կազմավորվես. ինչպե՞ս պիտի ձեռք բերես դպրոցում շտաղածդ... մանկությանդ եւ պատանեկությանդ քեզ գլացվածը... տեղատարափ հարցումներով, սրտցավորեն հարցնում է, եւ իր տված հարցումներին որպես եզրափակիչ պատասխան՝ ինքը խանաբար թե լաղրում է.

-Գրիր, նորից գրիր, ընդմիշտ գրիր:

Չգրելս ցանկացողների դեմքին թախիժ դնեմ. նրանց ցավացնեմ:

Իսկ ես առաջարկ թեևադրանքին թեեւ սրտովին համաձայնած, բայց որպես միջին ճամփա, ավելացնում եմ.

-Գրել. սակայն չուղարկել... խմբագիրներին:

## ՄԱՐԴԸ

Մարդը...:

Վառ արևը ծագեց: Արշալույսի արեւալույսը բոլոր տներն այցելել ուզեց, բոլոր տեղերը զնալ ուզեց... Բայց ահա մարդը հնարամտությամբ՝ արեւալույսը դեպի իր ուզած կողմն ուղղեց, իր կամքը պարտադրեց...

Այնքան խուղեր ու խրճիթներ խավարի մեջ մնացին:

Արևը բարձրացավ: Սրը ջերմացավ: Ուժեղացած ու կայտառացած արեւալույսը կարող էր բոլոր մութ եւ ըստ-վերոտ վայրերը լուսավորել, կարող էր բոլոր լուսակարոտ տեղերը հանդիպել... Բայց ահա մարդը նենգամտորեն աճապարեց իր բարձրաբերձ կառույցներով այնպես անել, որ իր չուզած տներում, իր չուզած տեղերում արեւալույսը մուտք չունենա...

Այնքան նկուղներ ու հյուղակներ մութի մեջ մնացին:

Բայց ահա օրը երեկո եղավ...

Արևն իր օրական վեհ գործը կատարածի մեծ գոհունակությամբ՝ իր քարի հրաժեշտն էր ուզում տալ, պարտասած իր շողերին հրամայելով հավաքվել, տուն զնալ, երբ ահա մարդ կոչվածը, ինչ որ չարամիտ ու թաքուն հետամտությամբ թողեց, որ արեւալույսին կարոտ մնացածները, արեւալույսին երկար սպասածները վերջալույսի հրաժեշտը հեռվից միայն տեսնեն, արշալույսի ծագման անձկազին սպասեն...:

Մարդը, իր նմանին արեւին կարոտ է թողնում:

## ԵԹԵ

Իմ անզին մի հատիկ սիրելիս.

Եթե պատահեր անգործ լինեի, քո շքեղ վերելքի կառույցին մասնակցող չլինեի, ես բարձրականչ ծայնով, սրտերը դյուլթող, քեզ պիտի զովերգեի.

Սրտի գործ համարելով:

Բայց թե ինքնագովություն չէ՞ր լինի:

Եթե պատահեր գիտակցորեն գիտակցված. վսեմ պարտականությունես քո ծաղկման գործում պատվավոր կերպով, անմնացորդ կատարումով, վերջացրած լինեի, պարսպ չըմնալու համար, սիրողի սրտալի բառերով, սրտին նստող, քեզ պիտի փառաբանեի.

Հոգու գործ համարելով:

Բայց թե ինձ և ս ուղղված չէ՞ր լինի:

Եթե պատահեր ոչինչ անելիք չունենայի, խոսքերն ու երգերը քիչ ու թերի համարվեին, այս լմ անկորակ մարմնովս երկտակված, հարկատուի պես, խոնարհաբար քեզ պիտի երկրպագեի.

Պաշտամունքի գործ համարելով:

Բայց թե քեզ դեռ տալիք չէ՞ր մնա:

Սակայն քեզմով հմայված, քեզմով հիանալու համար քեզ այցելող բազմացեղ բազմությունը զինովի անկեղծ հըպարտությամբ կխառնվեի.

Քեզ միշտ զերազանց, սիրելի համարելով:

Եթե միայն քախտը գեթ ժպտար:



Նորապսակ հարսի ձեռքում, քազմաթիվ հյուրերի ներկայութան, դանակ են դնում: Դանակը ձեռքին, ժպիտն երեսին, անչափ հաճույքով, խնդուն այտերով, նա այդ դանակով... բեյք է կտրում:

Նա կարկանդակ կտրելով, ուրախությունը սկսել տալով, ուրախություն է պատճառում:

Մսավաճառի խանութում, մսավաճառի ձեռքին մեծ ու սուր դանակ կա դրված: Հուժկու քազուկով նա միս կըտրելով, մարդկանց ծախելով, մարդկանց սնունդ մատուցելով է ուրախություն պատճառում:

Սակայն դանակը երբ դահիճի ձեռքում դրված է լինում, նա անողորմաբար մարդ է սպանում, անչափ վիշտ է պատճառում:

Վշտով ուրախացնել...:

Օ՞րոշոր դանակները, դանակայինները սպանությունների հավաքեցեք, հարսներին տվեցեք:

Նորահարսների կտրածներին են մարդիկ արժանի:

## ՕՐՍ

Ամեն առավոտ՝ երբ զով հովը զարթեցնելու մղումով մեղմորեն փչելով այցելում է, ես կենարար պարտավորության ըղձանքով արքնացած, պարտածանաչորեն զործի գնալ եմ աճապարում:

Սկսվում է Օրս:

Ամեն կեսօր՝ երբ տաք հովը հունձերով մեր բեղմնավորված՝ զաղջորեն փչելով թույլ թույլ անցնում է, ես մկաններով հոգնաբեկ ծալվում եմ, ձգտելով թարմանալ, գործս շարունակելով:

Կիսվում է Օրս:

Ամեն երեկո՝ երբ քամին կատարվածի բեռով բեռնավորված՝ սուրալով փչում և անդարձ մեկնողի տրամադրությամբ ծույլ ծույլ հեռանում է, ես հոգնատանջորեն հորանջելով անելիքս կատարածի զոհունակությամբ, գործըս վերջացրած պատրաստվում եմ տուն վերադառնալ:

Լրանում է Օրս:

Ամեն ամեն օր այսպես է սկսվում Օրս. այսպես է լրանում Օրս:

Տնից՝ զործատեղի, զործատեղից՝ տուն:



Ճղայնացա...

Երեկ էր, գերեզմանատուն էի գնացել: Մի ձեռք մարդ էր մեռել, թաղում էին: Բայց ոչ սիրտ մղկտացնող կանչ էր լսվում, ոչ հուզումնալից արցունք թափող էր երեք - վում: Ներկաներից ոչ մեկը չէր հեկեկում. ոչ մեկը վշտահար չէր երևում:

Շատ ապրածին պատժելու պես, լուռ ու ակնհայտ թաղում էին:

Տեսածիցս ազդված, դառնացած սրտով ընդվզելով, ջրղայնացած վճռեցի երիտասարդ հասակում մեռնել...:

Այսօր...: Այսօր արկածահար մի երիտասարդ մարդ են թաղում: Վաղամեռիկին սուզով-կսկիծով, կսկծալի աղի լացով. հեղեղանման, անսպառ արցունքներով, սրտակեղեք կանչերով են թաղում...: Պառավ մայրը վշտից մորմոքուն մազերն է փետում. ի՞ր մահն է աղերսում...: Մտողաչ կինը կուրծքն է ծեծում, աղիողորմ կանչում.

- Ինչու՞ թողեցիր, ինչու՞ գնացիր, օրս ինչու՞ սև արեցիր...:

Համատարած ու համավարակիչ այդ արցունքներից, այդ վշտալի կանչներից խորասուս ազդված ես գայրույթով ջրղայնացած բեկանեցի երիտասարդ հասակում մեռնելու երեկվա ցանկություն-վճիռս:

Բայց անարցունք թաղվել...:

## ԶԱՏԻԿ

Հային զվարթ տեսնելը իմ հանսպազոր աղոթքն է:  
Հայի ուրախ լինելը իմ մշտնջենական մաղթանքն է:  
Որքան եմ փափագում հայի համար ուրախ-զվարթ գատիկ լինի:

Ձատիկ ուրախաբեր, հաղթանակաբեր:  
Բայց տրտմությամբ տեսնում եմ, որ հայի համար դեռ զվարթ ուրախ օր չկա. - քանի նրա կեսը դեռ հայրենաբաղձ կարոտանքով է...:

Սակայն այսօր Ձատիկ է. Ձատիկն եկել է:  
Ես վշտածայն ասում եմ՝ հայի համար զվարթ գատիկ չկա. - քանի հարուստուն չի առել մարդակերտ միջոցը հափշտակված հայի հողերը վերադարձնող:

Թուրքի՞ գերածները...:  
Ես ցավով կրկնում եմ՝ հայը չի կարող ծիծղուն երես ծիծղել. - քանի ավերակված քաղաքների ու գյուղերի հողերը հայկական, դե՞ռ հայազուրկ են, դե՞ռ անարձագանք հայաւ կանչ են...:

Ես ասում եմ՝ հայը չի կարող խնդումներես խնդալ, քանի նրա մի մասը տարագրված, սփյուռքացած, հազար ձեռքի հպատակության հարկադիր ենթարկված կա, շարունակելով մնալ, համենա՛լ...: Մինչ մյուս մասը մի հողաշերտի վրա ծվարած, նման հեռագրալարի վրա թռած թռչուն, մարմնի մեծ մասը օդի մեջ...:

Հայի հոգևորախոլթյունը հայկական Զատիկով է:

Կգա՞: Աղոթքիս եւ մաղթանքիս խորությամբ հուսա -  
դրված հավատում եմ նրա գալուն, անպատճառ ուրախացնող  
գալուն:

Թող հիմա հայի Զատիկը փութացնող մաղթանքով, աղոթ  
քով, հայի հին վիշտը սրվակի մեջ լեցրած ըմպեմ. այս  
կարապետ Զատիկը շնորհավորելով, քարեմաղթելով:



Սրտալի կատարված այնքան ցանկալի խոստումների խո-  
պանության, անգործադրության եմ հանդիպել, ականատես  
եղել:

Այնքաններ խնդացմամբ խոստացան, բայց «մոռացմամբ»  
մոռացան:

Մի ծանոթ հայ տարագիր, իր տղային խոստացավ՝ «բիչ  
էլ մեծանաս, քեզ Հայաստան կտանեմ»:

Տարիներ հետո, մի երկու գետնի առեւտուրից հարըս-  
տացած... Ամերիկա հաստատվեց:

Մի այլ հայր, ավելի տրամաբան, իր որդուն ուրախաց  
րեց, խոստանալով նրա համար մեքենա կգնի... Բայց խա-  
ղամուլությամբ տարված լինելով, ունեցածը ձեռքից տա -  
լով, դեռ մինչև իսկ որդու... հին հեծանիվը ծախեց:

Հիմա այս խոստացողներին, բայց չգործադրողներին  
ինչ ասել, ի՞նչ անել:

Ազգայնորեն մեզ խոստացածներ, բայց չգործադրած -

ներ եղան, շատ էլ եղան. ի՞նչ արինք, ի՞նչ ասացինք:

Հիշե՞մ պատանեկության կամ նորամուտ երիտասարդու-  
թյան վառ օրերին այնքանների հայրենասիրությունից կը-  
րակված տաք խոստումները, երդումները, որ կշարունա -  
կեն պայքարը, պայքարելը, որ կզոհեն իրենց կյանքը,  
մինչև վերադարձելը հայկական հողերի... (որոնց վրա  
սակայն երբեք չեն գնա քնակելու):

Ապա այն մի ակ երիտասարդները՝ հիշեմ, որ ընկած,  
հաստատված աշխարհի ծայր անկյունը. - Հայաստանից դիտ-  
ված, որոնք խոստացան աննահանջ պայքարելու են թուր-  
քի դեմ, անվերջ պահանջելու են թուրքից... Բայց որ մի  
գրիչ գնելու, մի դիմումնագիր գրել տալու չափ դրամ  
չհանգանակեցին...:

Հիմա սրանցից ինչ պահանջել, ինչ պարտապանությամբ  
պահանջել:

Մի խոստումներ խոստացված, որքան հմայիչ ու դյու-  
թիչ էք հնչվում լսվելիս: Բայց որքան դառն էք, սրտա-  
ցավության տվող, անկատար լինելիս:

Խոստումներ, խորքով խոսքեր...:



Մի գրող գանգատում էր.

- Այս ի՞նչ բան է, որքան լոռնք, չխոսենք. այս  
պրն. Գ-ը ոտանավորներ է գրում, և միայն ոտանավոր-  
ներ, ու միշտ էլ՝ «ես գրեցի, ես ասացի, ես տեսա» է  
գրում...:

Ծանոթիս մտքի մտատանջումը կոհակելով, ընդմիջեցի.

- Մի՛ վրդովվիր, բարեկամ, կարծում եմ հիմա ժամանակներն այդպես են պահանջում, ընկալում: Օրինակ, աղջիկս, որ 14 տարեկան է, երբ ցանկանում է ընորոշիչ կերպով մի բան հայտնել.ասում է.- "նրա մազերն իմ մազերից կարճ են. նրա հասակը իմ հասակից երկար է. նրա աչքերի գույնը իմ աչքերի գույնն ունեն... :

- Հասկացա՞, ուզում ես ասել Գ- զրոզը քո այդ աղջկա նման անհաս, տասնչորս է՞, և ո՞չ... վաթսուներեք:

Հուզող հարցը հարցումով հարթեց ինքը՝ զանգատավոր զրոզը:

## ԵՐԵ

Եթե լինեիր...

Օ՛ եթե լինեիր, դու լինեիր մի ոսկեծուլյլ մեծ կոկորձ մարմարյա պատվանդանի վրա դրված, ես ըռպեապես հեթա - նոսացած, հայ սրտով երկյուղալից, ինկարկումով ծունկի եկած, քեզ պանծացնելով պիտի երկրպագեի.- հեթանոս դառնալուս համար հպարտանալով:

Իսկ եթե լինեիր, դու լինեիր մի լեռ երկնամերձ, կատարովը բարձրագահ, օ՛ փառաբանվելիք քո փառքի սիրույն հին օրերի ստրուկի հանգույն, ես՝ մինչև գետնահող խոնարհվելով գլուխ կտայի քեզմով հմայված. - ստոուկ լինելուս համար երջանիկ զգալով:

Եթե լինեիր... բայց ահա դու կու՞ ոչ կուռք, ոչ լեռ, այլ երկիր հարազատ, շնչավոր...:

Մեզ շնչավորներին քեզ սրտով սիրել տալով:

## ՆՈՐԱՍԵՐԵՐ

Օ՛ նորասերեր սիրելի, ես չեմ ուրանում, ես դեռ հաստատում եմ բարձրածայն, որ ես հնասեր, որ ես հնապաշտ հայ մարդ եմ:

Բայց ոչ հնավաճառ:

Օ՛ նորասերեր սիրելի, ես հնասեր, ես հնապաշտ եմ ոչ մանրուքների, առարկաների. ես հնասեր եմ, դարերից եկած, դարերին դիմացած իմ հին Հայաստանը սիրելով:

Սիրելով, սրտի սիրով պաշտելով:

Հայաստանն իմ հին...

Օ՛ նորասերեր սիրելի, իմ հնապաշտությունը թող կորիզը լինի ձեր նորասիրություն:



Ոմանք արևին չեն սիրում, երբ նա ամռանը տապով ու տաքով խանձում, այրում է:

Նույն մարդիկ սակայն արեւին պաշտում են, երբ նա ձմեռվա ցրտին թեթև նշուլում, շողում է:

Ոմանց համար ատելն ու սիրելը պայմանական է. ժամ ու պայման ունի:

Միայն իդեալ իմ սերը պայման չունենք. չունի:

Ոմանք ամառ օրերին երկնքի ծվեն ամպին դառնալից ատելութամբ, թշնամութամբ են նայում. նրան՝ երկինքի լազուրը մթազնող շարագործ համարելով:

Նույն մարդիկ սակայն աշնան օրերին երկնքով մեկ տարածված սև ամպերին երկրպագում են, հացաբեր անձրեւի ակնկալութամբ:

Այսօր խորապես ատող, վաղը արտալիր երկրպագող մարդիկ շատ կան, նայած պահին, ակնկալված շահին:

Միայն իդեալ իմ սերը շահ ու ժամ չունենք, չունի:

## ԽՈՂ

Խոհը որ կա՝ հարգելի հյուրն է, դրսից եկող: Նա սիրտս է մտնում, կարծել տալով տեղավորվել է ուզում: Սակայն նա զնում գլխումս է օթեվանում: Երբ ենթադրում եմ այդտեղ մնալուն կմնա, ահա, մշտաշարժ հյուրի նման, անհանգիստ շարժումներով, նա մատներիս մեջ է իջեւանում: Ապա՝ մատներս բռնած՝ մղումով տանում՝ զրիչ բռնել է հարկադրում. եւ որպես հերթական, անգամ անհետաձգելի մի գործի շարունակութուն, պարտադրալից պահանջով հարկադրում է զրեմ, զրեմ:

Օ՛, այս կերպ զրելը, այս կերպ մտազործելը:

Նա ինձ խոհականացրած, համազգեստ հագրած, թուղթի վրա տանջալից տանջում է:

Նա տենչացողի տոչորանքով տանջում է.՝ բուլբուլի ու թուլբուլի. սրտի ու մտքի համար հարկ է գզում տանջել, լավորակ խոսքեր զրել տալու, մարդկանց նվիրվելիք սրտահմա միտքեր տալու, ինձ վարժեցնելու ցանկության տենդով տանջա-տանջում. տանջում է:

Ինձ այդպես տանջող այդ հյուրը խոհը՝ ներշնչանքի մի տարբերակն է, մշտագալուստ եւ տենչալի իր այցելութուններով հարազատացած.

Եվ միշտ տենչացված:



Հիվանդ մարդը ամեն անգամ եւ ամեն տեղ, բոլորի՛ կողմից, գուրգուրանքի եւ խնամքի արժանի է:

Հիվանդ մարդը հոգածութեան եւ շուտափութեան բուժ - ման եւս արժանի է:

Հիվանդ մարդը...: Բայց առավել ո՞ր հիվանդին հար - զանք ու խնամք պիտի ցուցաբերենք, շուտ բուժելու մա - սին պիտի մտահոգվենք:

Խեղ խնամին, որ շատ խմելով հարբել, շատ հարբե - լուց հիվանդացել:

Թե՞ տանջահար աշխատողին, ցերեկը զիշերվա հետ խո - նած աշխատող քանվորին, որ շատ գործելուց, որ միշտ գործելուց տկարացել, տկարանալով հիվանդացել է:



Իմ սիրտը մանուկ է: Մանկան նման ձգտում է այն քանին, որ պսպղուն է, որ... վաղանցուկ է:

Իմ մտքում մշտնջենականը տեղ չունի: Ես մինչեւ իսկ նրանից խուսափում եմ, թեեւ արդեն հասուն տարի - քով եմ:

- Ինձ տվեք վաղանցուկը, աղաչում եմ:

Ինձ լսող մարդիկ զարմացած ինձ են նայում, հասուն տարիքով մարդուս, այս մանուկի սիրտ ունեցողիս:

-Վաղանցուկը տվեք, շատ ու շուտովեք.- շարունա - կում եմ անդադար, մանուկի սրտով խնդրել:

Մշտնջենականը կա, նա ինքը կա:

## ՑԱՎԸ

Նորածինը լաց չէր լինում, ձայն չէր հանում: Մայ - րը սակայն կարոտալից անձկութեամբ նրա լացն էր ու - գում տեսնել, նրա ծիչն էր ուզում լսել:

Եվ ահա ասես անսիրտ մայր լիներ, սիրող մոր սիրտ չունենար, որ մանկան կրունկը մի սուր ասեղով... ծա - կեց:

Ցավը լացել է տալիս: Ցավը թե մանկան լացաքեց եւ թե մորը անչափ ուրախաքեց, փափագին հասքեց:

Որդին չէր խոսում, ոչ մի բառ չէր ասում, լուռ ու համր էր: Մայրը սակայն անձկագին տենչանքով ու - գում էր որդին մի բառ թոթովեր, թեկուզ մի վատ խոսք ասեր, միայն թե խոսեր:

Եվ ահա ասես չար սիրտ ունենար, սիրող մոր սիրտ չունենար. որ նա իր որդու այտը... կծեց:

Ցավը խոսել է տալիս: Ցավը թե մանկան խոսեքեց եւ թե մորը անչափ հրճվեքեց, բաղձանքին հասքած:



Վայ ինձ, մարդս, ես ինքս եմ իմ առաջընթացը կասեցրել:

Ես շղթաներ եմ կառուցել, եւ որպեսզի նրանց ամրուածիւնը փորձեմ՝ իմ ոտքերին եմ ազուցել: Իսկ երբ ուզեցել եմ քայլել եւ վազել, տեսել եմ շղթաներ կան ոտքերիս ազուցված: Այնժամ Գանացել եմ կորովիս անմընացորդովը ոտքերիս ազուցված շղթաներն իմ կառուցած՝ ջարդել, ազատվել:

Ես շղթաներ եմ դարբնել, եւ որպեսզի նրանց տուկունութիւնը փորձարկեմ, ձեռքերիս եմ անցկացրել: Իսկ երբ ցանկացել եմ մի այլ գործ կատարել, տեսել եմ շղթաներ կան ձեռքերիս ամրացված: Այնժամ կորովալից ջանքերով տքնել եմ ձեռքերիս շղթաներն իմ դարբնած՝ Գախջախել, ազատվել:

Ես շղթաներ եմ կերտել անտեսանելի: Տեսականորեն փորձելու համար՝ մտքիս եմ հազցրել: Իսկ երբ կամեցել եմ մի վեհ գործի մասին խորհրդածել, տեսել եմ միտքս իմ կերտած անտեսանելի շղթաներով է կաշկանդվել: Այնժամ մարդու գերագույն հնարամտութեամբ մաքտել եմ անտեսանելի շղթաներից իմ կերտած՝ միտքս գերծել, ազատվել:

Ախ, ես մարդս, ինձ համար շղթաներ կառուցողս:



Ջան. ես հիմա գիտակցված ինդուլժիուն ունեմ, գիտականորեն հաստատվածի պես, որ դու կաս, հաստատուն ես:

Թեեւ քեզ չեմ տեսնում, թեեւ քեզ գրկել չեմ կարողանում, (դու այն հեովում ես), քայց սիրտս խնդութեան զվարթ հորձանքով է ողողվել, բերկրալից բերկրութեամբ է պարուրվել, գիտակցված իմաստութեամբը քո լինելուն, քո մնալուն:

Թեեւ կարող է, եւ է՛, որ դու ինձ երբեք չհիշես, անգամ ճանաչել չուզենաս, քայց սրտածին սիրո այս խընդութիւնս աներկբայորեն անեղծ է, հարազատը անկեղծորեն, սրտովին սիրողի, որ դու կանգուն ես, մնայուն ես, դրականորեն հաստատուն ես:

Թեեւ քեզ չեմ տեսել, թեեւ դու ինձ հաց չես տվել. նույնիսկ պապակ շրթներիս ջուր չես մոտեցրել, քայց հենց այն փաստացի միտքը, զգացմունքային կապակցութիւնը, որ դու իմն ես, հարազատս. սիրտս արդեն անկեղծորեն խնդացնող խնդութեամբ է պարուրում. պարուրել է:

Քո լինելովը՝ ես անպարտելի խնդուն եմ:

## ԵԹԵ

Եթե սիրում եք ասել.

Ասացեք այն ու այնպես, որ եթե հին ժամանակներում կտուրներից փողահարեին, ներկայումս էլ ուղիներին եւ քարձրախոսերով հայտարարեն, ապազայումս էլ տիեզերանավերից շեփորելու լինեն, դուք ձեր ասածի համար չամաչեք, ամաչելու կարիքը չունենաք:

Եթե սիրում եք զրել.

Գրեցեք այն ու այնպես, որ անցյալի հանրահայտ մաթադաթագիրները ջերմորեն պիտի ուզենային զրել: Գրեցեք այն ու այնպես, որ այս մեր օրերի հանճարեղ բերթողները, տաղանդավոր գրողները գոհունակությամբ պիտի ուզենան զրել: Գրեցեք այն ու այնպես, որ վաղն էլ մոլորակներից մեկի բնակիչը հաճույքով պիտի ցանկանա զրել, այնպես ու այնքան, որ գրող լինելու համար դուք չամաչեք, որ ձեր զրելը դուք ամոթանք չը համարեք:

Եթե սիրում եք գործել.

Գործեցեք այն ու այնպես, որ ոչ նրեկվա, ոչ այսօրվա և ոչ էլ վաղվա մարդը վնասվի, վնասվածի սրտով ձեզ անիծի...: Եվ դուք խղճի խայթի տառապանքից, կամ թե ձեր անձի վախից, մարդկանց երեսը նայելուց չամաչեք, ձեր իսկ հարազատին տեսնելուց չվախենաք...: Պատմության միջում անարգանք չունենաք:

Գործեցեք այն ու այնպես, որ անցյալում քարի հիշատակվածները գործել են, որ հիմա քարեհամբավները տենչում են գործել, եւ վաղն էլ այնքան հանրահայտներ հպարտութամբ պիտի փափագեն գործել:

Եթե միայն սիրում եք ասող, զրող, գործող լինել:



Մարդկանց ժպտացնելու ինչ բազմազան նսարներ կան: Իսկ ես անհնար եմ: Բայց մարդկանց ժպտալու ջերմ համամիտ եմ. կողմնակից եմ. մինչեւ իսկ տենդորեն ձրգտում եմ մարդկանց ժպտացնել:

Եվ ահա ես. ինչպես որ կամ, առանց օժանդակ դիմակի, առանց մեկ ուրիշին կրկնելու, մարդկանց դիմելով ասում եմ.

– Ինձ նայեցեք և ... ժպտացեք.

Մարդիկ նայում են, իմ վրա ժպտացնող ոչինչ չտեսնելով, զարմանում են: Բայց և ահա հենց այդ իմ պարզամտության վրա զարմացած... ժպտում են:

Ես անկեղծությամբս եմ մարդկանց ժպտացնում:

## ԱՅԴ ՁԵՎՈՎ

Երբ զետր պղտորված ու զայրացած, թաց շառաչներով  
իր իսկ ափերն է ապտակում, չկարծես նա չարակամ ու վր-  
նասակար է դարձել: Իր խորքում թաղված, մտերիմ ձկնորս-  
ներին, խեղդվածներին է նա ողբում ընկերի սրտով, այդ  
ձեռով:

Երբ ամենի ծովը կոհակելով սաստիկ փոթփոթվում է,  
լեռնաչափ ալիքներով շաշում, շառաչում է, չկարծես  
բարկացել ու վնասել է ձգտում: Ուռկանով կամ նավակով  
իր հատակն իջած անբախտ ձկնորսներին, խեղդվածներին է  
սգում հոր սրտով, այդ ձեռով:

Երբ մեծատարած ովկյանոսը ահեղորեն հառաչում է,  
ջրերը հետ ու հառաջ տեղաշարժելով, ալիքները իրար վր  
կուտակելով, չկարծես ջղայնացել եւ շարացել է, շարա-  
մըտությամբ ալեկոծված չար զործերի է հետամուտ...:  
Նա գոհված ձկնորսների, բոլոր խեղդվածների համար իր  
մեծ սրտի մեծ վշտով ափսոսալից օրոր է ասում մոր սըլ  
տով, այդ ձեռով:

Իրենց ձեռերով:



Ներկայացում կար: Գնացել էի: Երկար ու նիհար մի  
կին, և զուևդ ու կծիկ, կարծիլիկ մի կին, թերևս մո-  
տավոր ազգականներ, իրար կիպ կպած, աթոռ աթոռի, դի-  
մացս պերճորեն, փառավոր բազմել էին:

Գիրուկ կինը միշտ աջ ձեռքը բերանը տանելով...  
ատամներն էր մաքրում: Իր բերանովն էր միայն զբաղ -  
վում, եւ որպես թաց զուլորչի վեր բարձրացող նրա ժխո-  
րալից շնչառությունը՝ բեմում տեղի ունեցող խոսակցու  
թյունը պարագիտորեն խոնջտկում, ինձ համար անհասկա-  
նալի էր դարձնում:

Իսկ նիհարուկ կինը կարապի էր բարակ, շղակազմ երկար  
վիզը խնդրանք ներկայացնողի աղերսով միշտ վեր երկարաց-  
նելով, աջ ու ձախ տարուբերելով, ինձ զրկում էր բեմում  
կատարվածը տեսնելուց:

Օ, եթե մեկը շատ ազահությամբ խժոած չլիներ, գերա-  
նալով, մյուսը՝ ժողովակությամբ քիչ կերած չլիներ, նի-  
հարանալով, պիտի հարկադրված չլինեի վճարածս տոմսի  
համար ափսոսալից ցավել, ցաված սրտով վերհիշել...:

Այսպիսիների համար չէ՞ արդյոք, որ պարսիկներն ա-  
սել եւ շարունակում են կրկնել. - ո՛չ այն աղի աղին, ո՛չ  
այն անաղ անալին:

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես սեփականութիւն չունեմ: Այսինքն սեփական տուն-ընակարան չունեմ.- վարձակալ եմ:

Ես սեփական մեքենա չունեմ: Այսինքն երթեւեկութիւնս անրակառքով, եւ մերթ-եթե քախտս քանի-թաք-սիով եմ կատարում:

Ես սեփական գործ չունեմ: Այսինքն մի տեղ պաշտոնավարելով ոռճիկ եմ ստանում:

Ես, նաեւ, սեփական հայրենիք չունեմ: Այսինքն՝ հայրեն հայրենիքիս հպատակութիւնը չունեմ: Նրա զրկում չեմ ապրում, դե՞ռ տարազիր՝ հյուրընկալվում եմ:

Ահա այսքան գլխավոր սեփականութիւններից, եւ դեռ այնքան չզրած անհրաժեշտ սեփականութիւններից զուրկ մարդ եմ, քայքայ դեռ, տեսեք, ես քացարձակորեն սեփականութիւններից զուրկ չեմ:

Ջուրկ չեմ. որովհետեւ ես մի որդի ունեմ.- երանի՛ շատ որդիներ ունեցողներին.- որդի՛, որին ոչ մի օտար մարդ չի ասում սիրուն է, գեղեցիկ է: Ոչ մի օտար մարդ նրա կարոտովը չի մաշվում, եւ ոչ մեկը նրա հագուստ-կապուստովը, նրա ուտել-խմելովը չի մտահոգվում, ոչ մեկը նրա մեծանալուն, զարգանալուն հոգ չի տանում:

Մինչդեռ ես: Հենց այն, որ նա իմ որդին է, իմ սեփականութիւնն է, տեսեք, ինչպե՛ս աշխարհի ամենամեծ սեփականատերի աչքովը նրան ամենաճեղքեցիկ, ամենասիրուն եմ համարում. ինչպե՛ս ամենամեծ կարոտողի սրտովը կարոտում եմ, եւ ինչպե՛ս ամենամեծ հոգացողի զուրկութեան-քովը փայփայում եմ, խնամում եմ, և նրա մեծանալու հետ իմ հույսերն եմ քաղցրացնում:

Նա իմ սեփականութիւնն է, ես սեփականութիւններից զուրկ չեմ:

Միայն թե, փոխադարձորեն, արդյո՞ք ես նրա սեփականութիւնը չեմ:



Երբ մեկը դիրքի բարձրացում է ունեցել, նրա մոտ շնորհավորանքի գնալիս՝ նրան չեմ հիշեցնում անցյալը, հաշոգած լինելու քաղցրութիւնը: Այդ ամենը նա գիտե, գիտակցել է, կրկնութիւն կլինի:

Ես միայն ավելի բարձրացում եմ բարեմաղթում:

Երբ մեկը մի մարդանվեր մեծ գործ է կատարել. նրա մոտ գնահատանքի խոսք ասելու գնալիս՝ բարի գործի առավելութեան, հոգեկան խայտանք գգալու քաղցրութեան մասին չեմ խոսում: Այդ ամենը նա հասկացել, զգացել է, ծանծրալի կրկնութիւն կլինի:

Ես միայն շատ բարի գործեր կատարել եմ մաղթում:

Երբ մեկը ծանր հիվանդութիւններից առողջացել է. նրան տեսութեան գնալիս՝ հիվանդութեան վատութիւնը, առողջութեան առավելութիւնը, անհրաժեշտութիւնը չեմ փաստարկում: Այդ ամենը նա կրել, ապրել է, անհարկի կըրկնութիւն կլինի:

Ես միայն միշտ առողջ մնալ եմ բարեմաղթում:

Իսկ երբ մեկը վտանգալից արկածից մազապուրծ ազատվել է, նրա մոտ խնդակցութիւնս հայտնելու գնալիս՝ արկածի որպիսութիւններից չեմ հարցնում, այն վերհիշել չեմ տալիս, այլ միայն ամբողջ սրտիս տենչանքով ուժգին գոչում եմ.

- Անկցի՛ արկածը:

## ԵԹԵ

Եթե ես վստահ չլինեմ, որ խստադեմ ոստիկանը ինձ սիրով է ձերբակալելու, թեև ոչ մի հանցանք չգործած, սակայն ինձ ձերբակալել կտամ:

Եթե ես վստահ չլինեմ, որ օրինապահ դատավորը ինձ սիրով է դատելու, ես ինձ չպաշտպանելով, ինձ դատապարտել կտամ:

Եթե ես վստահ չլինեմ, որ խստասիրտ բանտապետը ինձ սիրով է բանտարկելու, ես բնակարանս թողած, ես ինձ բանտարկել կտամ:

Եթե միայն սիրով, սիրով լինեն:

## ՎԵՐՋ

نام: کتاب اندیشه  
نویسنده و ناشر: پطروس کاجیرونی  
۲۰۰۰ نسخه  
چاپ اول، دیماه ۱۳۶۲  
۶۴ صفحه، قطع رقعی  
چاپ ندا، تهران

پطروس کاجبرونی

# کتاب اندیشه

بزبان ارمنی

○○○○○